ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽԱՆԴԻՐԸ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. թեկն., դոցենտ
Վ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկ. գիտ. դոկտոր
Մ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր
Գ. Ա. ԲԱԲԱՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Ծիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. նոյեմբերի 1-ին, ժամը 12^{00}-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. սեպտեմբերի 30-ին:

Մասնագիտական 020 խորհրդ
գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկն., դոցենտ **Ա. Հ. ՍՎԱՋՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Յուրաքանչյուր գիտական ոլորտի կարգավիճակն ու սոցիալական վարկը պայմանավորված են տեսության զարգացման մակարդակով, ինչը լիարժեք պատկերացում է տալիս իրականության որոշակի ոլորտն օբյեկտիվորեն արտացոլող օրենքների ու օրինաչափությունների մասին և տվյալ գիտության ուսումնասիրության առարկան է:

Գիտելիքների համակարգն արտացոլվում է տվյալ գիտության հասկացությունների և կատեգորիաների համակարգում: Գիտության մեջ հասկացությունների ամրապնդումը բավականին բարդ ու երկարատև գործընթաց է: Ձևավորվելով տարերայնորեն՝ որպես իրականության և էմպիրիկ փորձի իմաստավորման արդյունք՝ դրանք վերափոխվում են՝ դառնալով որևէ գիտական համակարգի բաղադրիչ:

Մանկավարժությունը՝ որպես հնագույն գիտություններից մեկը, ներկայումս ունի հասկացությունների որոշակիորեն ձևավորված համակարգ, որտեղ հստակության տարբեր աստիճաններով ամրագրված է մանկավարժական փորձը: Դրա հետ միասին՝ գիտական հասկացությունների համակարգում մշտապես կատարվում են գործընթացներ, որոնք կապված են հասկացությունների իմաստային փոփոխության, նոր հասկացությունների կողմից կատեգորիալ կարգավիճակի ձեռք բերման կամ, հակառակը, նրա առանձին կատեգորիաների կողմից նախկին նշանակության վերաիմաստավորման հետ:

Մանկավարժության հասկացություններին առնչվող տերմինաբանական խնդիրները սրվում են հատկապես նրա առավել կտրուկ զարգացման շրջաններում, կրթական համակարգի բարեփոխման պայմաններում: Այդ առումով մանկավարժության՝ որպես գիտության և պրակտիկ գործունեության ոլորտի առաջընթաց զարգացումն ուղեկցվում է մի շարք առանձնահատուկ խնդիրներով, որոնք վերաբերում են նրա հասկացությունների համակարգին:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի զարգացումը և բարեփոխումներն անհնար են առանց այդ գործընթացի մի շարք պայմանների որոշարկման: Այդ պայմաններից մեկը կարող է լինել ժամանակակից գիտամանկավարժական տեսության նորացումը, որն անհրաժեշտ է իրականացնել մանկավարժական տերմինաբանության և հասկացությունների՝ պատմականորեն ձևավորված համակարգի նորացման հիմքի վրա: Ենթադրվում է, որ կրթության մեջ մանկավարժական տերմինաբանության ոլորտում ինտեգրված գործընթացները հայրենական ավանդույթների վրա հիմնելը Հայաստանում ձեռք է բերում առանձնակի նշանակություն: Բացի այդ՝ հայրենական մանկավարժական տերմինաբանության զարգացման իմաստավորման կարևորությունը կապված է միջազգային ստանդարտացման գործընթացների հետ, որի

առաջնային ուղղություններից մեկը ազգային տերմինաբանական կայուն համակարգի ստանդարտացումն է: Թեև որքանով են խորապես վերլուծված հայրենական տերմինաբանության հիմնախնդիրները, ըստ այդմ՝ որոշարկվում է միջազգային կրթական ինտեգրման գործընթացներում Հայաստանի մասնակցության արդյունավետությունը:

Ժամանակակից հայ մանկավարժական գիտության մեջ տերմինաբանական-հասկացութային համակարգի հիմնախնդիրների լուծումը հանդես է գալիս որպես առաջնահերթություն: Այս ուղղությամբ հետազոտությունների նշանակալիությունը մեծապես կախված է մանկավարժական հասկացութային-տերմինաբանական համակարգի կազմավորման և զարգացման ամբողջ ճանապարհի խոր վերլուծությունից:

Այսպիսի իրադրությունը ծնում է համալիր հիմնախնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Մասնավորապես հարկ է նշել, որ ժամանակակից մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում որոշ հասկացություններ հաճախ նշանակվում են տարբեր տերմիններով, կամ հակառակը՝ որևէ տերմին կարող է բովանդակել սկզբունքորեն տարբեր հասկացություններ: Նույնիսկ այնպիսի կարևորագույն կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «կրթություն», «դաստիարակություն», «ուսուցում», ստանում են տարբեր, երբեմն հակասական մեկնաբանություններ: Նկատվում է նաև այնպիսի նոր բառերի և բառակապակցությունների թվի՝ գործնականում անկառավարելի աճ, որոնք հավակնում են մուտք գործել մանկավարժության տերմինաբանական համակարգ:

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ հասկացութային-տերմինաբանական համակարգի նորացմանն առնչվող ուսումնասիրությունները նպաստում են մանկավարժական գիտելիքի առավել խոր և կարգաբերված զարգացմանը, նրա տեսական կայունությանը:

Հետազոտության նպատակը: Տեսական հետազոտությունների հիման վրա բացահայտել ժամանակակից մանկավարժական հասկացությունների համակարգի զարգացման միտումները և հիմնավորել մանկավարժության հասկացությունների համակարգի նորացման անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտը ժամանակակից մանկավարժության հասկացությունների համակարգման գործընթացն է:

Հետազոտության առարկան. ուսուցման և դաստիարակության գործընթացների գիտամանկավարժական ապահովումն է:

Թեմայի մշակվածության աստիճանը: Խորհրդային շրջանի գիտամանկավարժական գրականության մեջ մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրությունն սկսվում է 1960-ական թվականների վերջից: Այդ բնագավառի առաջին աշխատություններից մեկը կարելի է համարել Ի. Մ. Կանտորի «Մանկավարժական բառարանագրություն և բառագիտություն»

գիրքը, որտեղ բացահայտվել են մանկավարժության առումով բառարանահանրագիտարանային գրականության պատմությունը և տեսական հիմունքները՝ որպես մանկավարժական գաղափարների և մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվական աղբյուր: Հեղինակը փորձել է տեսականորեն վերլուծել մանկավարժական տերմինաբանության և մանկավարժական գիտելիքի զարգացման մեջ նրա դերը: Ավելի ուշ այս հարցը նույն հեղինակի կողմից առավել հիմնավոր կերպով ուսումնասիրվել է «Մանկավարժության հասկացությային-տերմինաբանական համակարգը. տրամաբանական-մեթոդաբանական հիմնախնդիրներ» գրքում:

Վերջին տարիներին մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրությունը գիտական գրականության մեջ իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- մանկավարժական գիտության հասկացությային-տերմինաբանական համակարգի կառուցվածքի և գործառույթների վերլուծությունն (Վ. Ի. Գինեցինսկի, Ա. Ֆ. Զակիրովա, Վ. Մ. Պոլոնսկի, Տ. Ա. Ստարշինովա, Բ. Տ. Լիխաչև, Ա. Յա. Նայն, Գ. Ն. Շտինովա, Գ. Գ. Խայրուլին).
- մանկավարժական գիտելիքի բնագավառի տերմինաբանության վերլուծությունն՝ ընդհանուր մանկավարժության (Ի. Մ. Պուլատով), դիդակտիկայի (Ա. Վ. Բորդովսկի, Ե. Վ. Վոստոկովա, Բ. Ս. Գերշունսկի, Վ. Ի. Գինեցինսկի, Ս. Վ. Երյոմինա, Վ. Վ. Կրևևսկի, Վ. Ա. Իզվոզչիկով և այլք), դաստիարակության տեսության (Վ. Ս. Բեզրուկովա, Վ. Ի. Գինեցինսկի, Ի. Վ. Կիչևա, Բ. Պետրուշկին և այլք), սոցիալական մանկավարժության (Ա. Ս. Վորոնին).
- մանկավարժական ուսումնասիրություններում տերմինների միանշանակության հիմնախնդրի մշակում (Վ. Վ. Կրևևսկի, Ն. Լ. Կորշունովա).
- էթնոմանկավարժության հասկացությային համակարգի ուսումնասիրությունն (Զ. Օ. Կեկեևա, Ե. Լ. Խրիստովա և այլք).
- մանկավարժական գիտության բառապաշարի վերլուծությունն լեզվաբանական տեսանկյունից (Ռ. Մ. Տագիևա, Վ. Օ. Տեն և այլք):

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ ժամանակակից մանկավարժական հասկացությունների նորացումը և զարգացումը կլինեն արդյունավետ, եթե.

- բացահայտվեն մանկավարժական հասկացությունների համակարգի նորացման պայմանները և ձևավորման հակասությունները,
- հիմնավորվեն մանկավարժական հասկացությունների նորացման գործընթացի անհրաժեշտությունը և զարգացման միտումները՝ պայմանավորված մանկավարժական նոր գաղափարների ու հայացքների կայացմամբ, ինչպես նաև պատմամշակութային, սոցիալ-քաղաքական, տնտեսական վերափոխումների և գիտատեխնիկական առաջընթացի գոր-

ծոններով,

- բացահայտվեն մանկավարժական հասկացությունների բնութագրիչները փիլիսոփայության, լեզվաբանության և մանկավարժության դիրքերից,
- մշակվեն մանկավարժական հասկացությունների ճշգրտությունը և միանշանակությունն ապահովող մեթոդաբանական սկզբունքները և տեխնոլոգիան:

Հետազոտության նպատակին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան ձևակերպվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել տերմինաբանության դերը մանկավարժական գիտության լեզվի ուսումնասիրության գործընթացում:
2. Որոշել ժամանակակից մանկավարժական հասկացությունների համակարգի ուսումնասիրման, համակարգման և ձևավորման խնդիրները:
3. Բացահայտել ժամանակակից մանկավարժական հասկացությունների նորացման գործընթացի և զարգացման առաջատար գործոնները՝ հաշվի առնելով հումանիստական մոտեցման գաղափարները և անձնակենտրոն սկզբունքները:
4. Բացահայտել մանկավարժության հասկացությունների համակարգի ձևավորման հակասությունները և հիմնախնդիրները:
5. Որոշել մանկավարժության հասկացությունների նորացման և հետագա զարգացման պայմանները:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մանկավարժության և հոգեբանության հիմնարար հայեցակարգային դրույթները, մոտեցումները և սկզբունքները: Որպես հիմնական մեթոդաբանական մոտեցումներ են ընդունվել համակարգային և տրամաբանական-պատմական մոտեցումները, որոնց լույսի ներքո մանկավարժական հասկացությունների համակարգի ձևավորումը, նորացումը և զարգացումը բացահայտվել են որպես բազմաչափ ամբողջական գործընթաց, որը պայմանավորված է ներքին՝ մանկավարժական, և արտաքին՝ սոցիալ-քաղաքական, մշակութային և տնտեսական գործոնների ազդեցության հանրագումարով:

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները.

1. Հիմնախնդրին նվիրված գիտական գրականության վերլուծության մեթոդ՝ բացահայտելու համար հիմնախնդրի առկայության, նրա ընդունվածության և նկատվածության աստիճանը՝ հնարավորություն ունենալով անհրաժեշտության դեպքում սկսելու համարժեք որոնումներ՝ այն բարեփոխելու նպատակադրմամբ:
2. Մանկավարժական գրականության մեջ հասկացությունների վերհանման և միմյանց հետ համեմատելու մեթոդները՝ բացահայտելու համար միմյանց

հետդրանց ունեցած հարաբերակցության պատկերը:

3. Համակարգային վերլուծության, ինդուկտիվ և դիդակտիկ նկարագրման մեթոդները՝ հիմնված դիալեկտիկայի, գիտականության, դետերմինիզմի, պատմականության և սինխրոնիզմի սկզբունքների վրա, ինչպես նաև համակարգման և ընդհանրացման մեթոդները:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2008-2011 թթ.) կատարվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, լեզվաբանական և մանկավարժական գրականության ուսումնասիրում: Այդ նյութերի համեմատման-համադրման և տրամաբանական-պատմական վերլուծության հիման վրա բացահայտվել են մանկավարժական հասկացությունների նորացման և զարգացման հիմնական գործոնները և ձևավորման սկզբունքներն ու պայմանները:

Երկրորդ փուլում (2012-2014 թթ.) կատարվել է հիմնախնդրի վերաբերյալ տեսական-մեթոդաբանական մոտեցումների իմաստավորում, մշակվել է հետազոտության հայեցակարգային հիմքը:

Երրորդ փուլում (2015-2017 թթ.) իրականացվել են հետազոտության արդյունքների ամփոփումը և ատենախոսության գիտական շարադրումը:

Հետազոտության գիտական նորույթը

1. Բացահայտվել են մանկավարժական հասկացությունների բնութագրիչները փիլիսոփայության, լեզվաբանության և մանկավարժության դիրքերից:

2. Բացահայտվել են մանկավարժության հասկացությունների համակարգի զարգացման հակասությունները, առանձնացվել՝ հիմնախնդիրները:

3. Բացահայտվել են մանկավարժական հասկացությունների նորացման միտումները՝ որպես մանկավարժական գիտության հիմնախնդրային դաշտի արտացոլում՝ փոխկապակցված մանկավարժության տեսության և պրակտիկայի, հասարակական կյանքի սոցիալ-քաղաքական, մշակութային, գիտական և տնտեսական փոփոխությունների հետ:

4. Ներկայացվել են մանկավարժության հիմնական հասկացությունների մեկնաբանության հիմնախնդիրները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Բացահայտվել են մանկավարժական հասկացությունների նորացման էությունը և միտումները՝ կապված մանկավարժության տեսության և պրակտիկայի դինամիկայի ու կյանքի պայմանների սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային վերափոխումների հետ: Վերջինս ընդլայնում է գիտական պատկերացումները մանկավարժական գիտության զարգացման վերաբերյալ: Բացահայտելով մանկավարժական հասկացությունների համակարգի հակասությունները և նորացման հիմ-

նախնդիրները՝ զարգանում է մանկավարժական տերմինաբանության ընդհանուր տեսությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել «Մանկավարժություն» և «Սոցիալական մանկավարժություն» դասընթացների դասավանդման ընթացքում: Միաժամանակ դրանք կարող են հիմք հանդիսանալ մանկավարժական բառարաններում համարժեք շտկումներ կատարելու համար:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Մանկավարժական տերմինաբանությունը խիստ ճշգրիտ չէ: Մանկավարժական շատ հասկացությունների և տերմինների հատուկ են բազմիմաստությունն ու հոմանշությունը, ինչը հանգեցնում է մանկավարժական երևույթների մեկնաբանությունների ու բնորոշումների անհստակության և անորոշության:

2. Ամբողջության մեջ մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրման հարցում միջառարկայական մոտեցումը նպաստում է օբյեկտիվորեն գնահատել նրա յուրահատկությունը, համակարգել կառուցվածքը, հետևաբար նաև նպաստել մանկավարժական իմացության կանոնակարգմանը:

3. Մանկավարժության կարևորագույն ու միաժամանակ բարդ հիմնահարցերից է հասկացությային համակարգի ձևավորումն ու զարգացումը, առանց որոնց այն չի կարող գոյություն ունենալ: Հասկացությային համակարգը մանկավարժական գիտության զարգացման հիմնական գործիքներից է, քանի որ արտացոլում է ինչպես նրա զարգացման մակարդակը, այնպես էլ դինամիկան: Կատարելով իմաստային և հաղորդակցական գործառույթ մանկավարժական գիտության մեջ՝ հասկացությային համակարգը հանդես է գալիս որպես գիտական գիտելիքի կայացման և հետագա զարգացման նախադրյալ:

Հետազոտության հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովվել են ատենախոսության տրամաբանական կառուցվածքով, հիմնախնդրի բացահայտմամբ, նպատակի և խնդիրների լուծման համալիր մոտեցմամբ, հետազոտության տեսական մեթոդների կիրառմամբ, նաև վերնագրի, նպատակի, նորույթի ու պաշտպանության ներկայացված դրույթների համակարգվածությամբ:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում, Վանաձորի թիվ 5 ավագ, թիվ 28 և թիվ 7 հիմնական դպրոցներում: Փորձաքննության հավաստիությունն ապահովվել է ՎՊՀ-ում կազմակերպված գիտաժողովում ելույթով, ինչպես նաև գիտական ամսագրերում հրապարակված հոդվածներով:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 143 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Հետազոտության գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Ժամանակակից տերմինագիտության հիմնախնդիրները»** ենթագլխում ներկայացվում է, որ տերմինաբանությունն այսօր հետազոտողների ավելի մեծ ուշադրությունն է գրավում, ըստ որում՝ տերմինագիտությանը՝ որպես տերմիններով զբաղվող գիտությանը, արդի գիտակարգերի համակարգում ամենից գերակատեղերից մեկն է հատկացվում:

Տերմինաբանության ընդհանուր տեսության առարկան են կազմում՝ ա) մասնագիտական բառերի ձևավորման և կիրառության ուսումնասիրությունը, որոնց օգնությամբ կուտակվում և փոխանցվում են մարդկության ժողոված գիտելիքները, բ) գոյություն ունեցող տերմինաբանական համակարգերի կատարելագործումը, գ) նոր տերմինների և դրանց համակարգերի ստեղծման արդյունավետ որոնումները, դ) տարբեր գիտությունների տերմինաբանությանը հատուկ ընդհանրական գծերի որոնումը:

Տերմինագիտությունը ժամանակակից գիտական իմացության բուռն զարգացում ապրող հատուկ ոլորտ է, որ տեղայնացված է լեզվաբանության, մակացաբանության, իրազեկման տեսության, տրամաբանության, փիլիսոփայության և իմացության ու գործունեության մասնագիտական ոլորտների ողջ համալիրի հանգակետում: Տերմինագիտությունը, ըստ այդմ, միջգիտակարգ է: Նրա ուսումնասիրության գլխավոր առարկան տերմինների և տերմինահամակարգերի ծագման, զարգացման ու գործառության օրինաչափությունն է:

Երկրորդ՝ **«Համակարգայնությունը՝ տերմինաբանական բառաշերտի հիմնական ազդակ»** ենթագլխում տրվում է, որ յուրաքանչյուր գիտաճյուղի տերմինները կազմավորում են հասկացական կապերով որոշվող սեփական համակարգերը՝

արտահայտված լեզվական միջոցներով: Այդ համակարգերն արտացոլված են տերմինաբանական դաշտերի և գիտության ու տեխնիկայի բազմաթիվ ճյուղային բառարանների վրա:

Ինչպես ամեն մի տերմինադաշտ, մանկավարժական տերմինաբանության դաշտը ևս կազմված է բաղադրիչների բազմությունից, որոնց համակարգային կապերը կախված են իրարից և միաժամանակ ազդում են իրար վրա: Լինելով ամբողջական՝ մանկավարժական տերմինաբանության դաշտը բաղկացած է փոխհարաբերությունների մեջ գտնվող տերմինաբանական համակարգից, տերմինաբանական շարքից և տերմինից:

Երրորդ՝ **«Հոմանշային հարաբերությունների յուրահատկությունը մանկավարժության տերմինաբանական զինանոցում»** ենթագլխում խոսվում է այն մասին, որ գիտության հասկացական-տերմինաբանական զինանոցը կենտրոնացնում է իր մեջ գիտության էությունը, արտացոլում է նրա առարկան, արժեքը, խնդիրներն ու նպատակները, կառուցվածքն ու համակարգը: Գիտական հասկացություն նշանակող տերմիններում ձևակերպված են գիտության այս կամ այն ոլորտի ճանաչողական գործունեության արդյունքները: Լինելով կոդավորման, իրազեկման և իրազեկության պահպանման աղբյուր՝ տերմինները դրսևորվում են որպես մտքի և հետազոտության գործիք, կատարում են մասնագիտական հաղորդակցության միջոցի դեր: Դա նշանակում է, որ տերմինաբանական համակարգն արտացոլում է իրականության գիտական իմաստավորումը լեզվական միջոցներով:

Մանկավարժության ժամանակակից տերմինաբանության մեջ հոմանշության երևույթը մի կողմից՝ ապացուցում է հասկացական-տերմինաբանական զինանոցի հարստացման գործընթացի աշխուժացումը, մյուս կողմից՝ հետազոտվող խնդրի դիրքից, հասկացական-տրամաբանական զինանոցում փոխակերպումների վերլուծության ընթացքում ևս մի հարցադրում է անում՝ նոր տերմինն արդյո՞ք նոր հասկացության նշան է, թե՞ հանդես է գալիս որպես արդե՛ն եղած նշանակության զուգանդամ:

Չորրորդ՝ **«Տերմինի և հասկացության հարաբերակցությունը»** ենթագլխում ուշադրություն է դարձվում այն փաստի վրա, որ գիտական իմացության յուրաքանչյուր բնագավառի, այդ թվում նաև՝ մանկավարժության, կայացումը կապված է հասկացությունների զարգացման հետ, որոնք, մի կողմից, ապահովում են տվյալ բնագավառի իմացության կապն այլ բնագավառների հետ, մյուս կողմից՝ որոշում են տվյալ բնագավառի գիտական իմացության յուրահատկությունը: Տերմինների, հասկացությունների և կատեգորիաների համակարգը կազմում է մանկավարժական գիտության կատեգորիալ ապարատը:

Մանկավարժության կարգային զինանոցի մասին խոսելիս նախևառաջ անհրաժեշտ է տարբերել **«տերմին»** և

«հասկացություն» բառերը:

Մանկավարժության կատեգորիալ ապարատը ներառում է տարբեր մակարդակների տերմիններ:

Յուրաքանչյուր մանկավարժական կատեգորիա կարող է դիտարկվել, որոշարկվել և վերլուծվել 3 տեսանկյունից՝ որպես. 1) երևույթ (սոցիալական, մշակութային և այլն), 2) գործընթաց, 3) գործունեություն:

Յուրաքանչյուր գիտության, նաև մանկավարժության տերմինները ձևավորում են համակարգեր:

Տերմինները տարբերում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են սահմանման առկայությունը, համակարգայնությունը, մասնավոր գիտության, գիտակարգի կամ գիտական դպրոցի տերմինաբանության ներսում մենիմաստության միտումները, արտահայտչականության բացակայությունը, ոճական չեզոքությունը:

Մանկավարժական գիտության մեջ տերմինաբանական միավորների գործառության առանձնահատկությունների հաշվառմամբ ձևակերպվում են հետևյալ բնորոշումը. **տերմինը մանկավարժության ոլորտում կիրառվող բառ է կամ բառակապակցություն, որ ճշգրտորեն անվանում է գիտամանկավարժական հասկացությունները և սահմանում է դրանք**:

Մանկավարժության մեջ հասկացության ձևավորումն ունի իր յուրահատկությունը: Այդ գործընթացի վրա լուրջ ազդեցություն է ունենում ոչ միայն գիտության զարգացման մանկավարժության ներգիտական գործոնը, այլև հանրային-քաղաքական, սուբյեկտիվ կամ «խորքային» գործոնները: Կախված մանկավարժական գործընթացի և մանկավարժությամբ իրացվող «հանրային պատվերի» իրացման որոշակի պատմական պայմաններից՝ տեղի է ունենում մանկավարժության հիմնական հասկացությունների բովանդակային համալրում (դա համոզչորեն ցուցադրվում է տարատիպ հասարակություններում ընդունված դաստիարակության նպատակներով):

Ատենախոսության երկրորդ՝ «Մանկավարժության հասկացությունների համակարգի անկատարությունը և զարգացման անհրաժեշտությունը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Մանկավարժական տերմինաբանության ճշգրտության և միանշանակության պահպանումը որպես մանկավարժության հրատապ խնդիր»** ենթագլխում ներկայացվում են ներկա ժամանակաշրջանում մանկավարժության կատեգորիալ ապարատի զարգացման հետևյալ միտումները.

1) հասկացությունների ակտիվ ներառում փիլիսոփայությունից («տարածություն», «իմաստ», «ընտրություն» և այլն) և գիտական իմացության այլ ճյուղերից («կառավարում», «անհավասարակշիռ համակարգ», «հայեցակարգ» և այլն),

2) Մանկավարժության կատեգորիալ ապարատի իմաստով գիտական տերմին չհամարվող բառերի ներառում («հանդիպում», «վերելք» և այլն):

3) Ավանդական մանկավարժական հասկացությունների, առաջին հերթին՝ հիմքային կատեգորիաների վերաիմաստավորում («դաստիարակություն», «ուսուցում», «կրթական գործընթաց», «մանկավարժական փոխգործակցություն» և այլն):

4) Իմաստների բազմազանություն, որով օժտված է յուրաքանչյուր մանկավարժական հասկացություն:

Ժամանակակից մանկավարժության կատեգորիալ ապարատը ենթադրում է իմաստների բազմազանություն (մանկավարժական տերմիններում առկա): Միաժամանակ ենթադրում է հստակություն և միանշանակություն տերմինների ընկալման մեջ, որոնք օգտագործվում են մանկավարժական հայեցակարգի, առանձին գիտամանկավարժական հետազոտության սահմաններում:

Մանկավարժական տերմինաբանությունն ավանդաբար դիտարկվում է երեք հիմնական տեսանկյունից՝ փիլիսոփայական, լեզվաբանական և մանկավարժական:

Երկրորդ՝ **«Մանկավարժության հետազոտությունների հասկացական-տերմինաբանական զինանոցի դերը»** ենթագլխում առաջ է քաշվում մանկավարժական գիտության զարգացումն անխուսափելիորեն նոր հասկացությունների ու տերմինների, դրանց ճշգրտման, վերիմաստավորման, արդեն գոյություն ունեցող հասկացությունների սրբագրման ու կարգաբերման պահանջի գաղափարը: Մանկավարժության կարգային-հասկացական համակարգի զարգացմանը կարելի է հետևել մանկավարժության՝ խորհրդային և հետխորհրդային շրջանների զարգացման օրինակով:

Մանկավարժական հետազոտությունների մեջ հասկացական զինանոցի համակարգման անհրաժեշտությունը կապված է, նախ և առաջ, այն բանի հետ, որ «այն կատարում է մի շարք կարևոր մեթոդաբանական գործառույթներ.

Ա) Ապահովում է գիտության արտածական համակարգումը (բացահայտելով հիմնական հասկացությունները՝ հետազոտողը կարող է արտածական օրենքներով դուրս բերել դրանցից այլ պնդումներ և տեսական դրույթներ, այդ թվում՝ այնպիսիք, որոնք հնարավորություն կտան փորձնական մեկնաբանության).

Բ) Նպաստում է փորձնական և տեսական գիտելիքների բացատրությանը և համակարգմանը (առարկաների էական հատկությունները նկարագրելով՝ հասկացությունները մեկնաբանում են տեսությամբ և գործնականորեն ձեռքբերված գիտելիքները՝ կապ հաստատելով դրանց միջև և համակարգելով դրանք):

Գ) Գիտելիքների զարգացումն ուղղորդում է հասկացությունների հստակացման, խորացման և դրանց

ծավալի ընդլայնման բովով»:

Երրորդ՝ **«Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունների և կատեգորիաների մեկնաբանման հիմնախնդիրները»** ենթագլխում նշվում է, որ սոցիալական մանկավարժության հասկացությունների համակարգին լիովին բնորոշ են այնպիսի իմաստաբանական գործընթացներ, ինչպիսիք են բազմիմաստությունը, հոմանշությունը, հականշությունը, փոխաբերականացումը: Մեր կարծիքով՝ առավել սուր է դրված սոցիալական մանկավարժության բազմաթիվ հասկացությունների ծավալային հոմանշության խնդիրը, մասնավորապես՝ սոցիալականացման, սոցիալական դաստիարակության, սոցիալական միջավայրի և այլն:

Սոցիալական մանկավարժության հասկացութային-կատեգորիալ համակարգի անկատարության և խոցելիության մասին վկայում են մի շարք իրողություններ: Դրանց շարքում առաջին հերթին նշում են հասկացութային համակարգի կայունացած կառուցվածքի բացակայությունը: Խոսքն այն մասին է, որ լիովին դիտարկված չեն նրա փոխհարաբերությունները դասական մանկավարժության հասկացութային համակարգի հետ, մինչև վերջ բացահայտված չէ հիմնական հասկացությունների համակարգը, որոնց մեծամասնությունը սահմանված է մակերեսայնորեն և ոչ հստակ: Այդ և այլ առանձնահատկություններ օբյեկտիվ բնույթ ունեն ու պայմանավորված են սոցիալական մանկավարժության՝ որպես արագ զարգացող երիտասարդ գիտության կարգավիճակով:

Չորրորդ՝ **«Սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների՝ միմյանց հետ ունեցած հարաբերակցության քննարկումը մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ»** ենթագլխում սոցիալականացումը դիտվում է որպես մարդու կողմից սոցիալ-հոգեբանական, հասարակական անհատի կարգավիճակի ձեռք բերման բարդ և երկարատև գործընթաց: Այդ ընթացքում մարդը ձևավորվում և հաստատվում է որպես անձնավորություն, մտնում է ակտիվ հասարակական կյանք: Սոցիալականացման ընթացքում կայանում են նրա հարմարումը շրջապատող միջավայրին, գործունեության դրդապատճառների ձևավորումը և դրանց ազդեցությունը գիտակցության և վարքագծի զարգացման վրա:

Սոցիալականացումը դիտարկվում է իբրև սոցիալական կյանքի պատրաստի ձևերի և միջոցների գիտակցված յուրացման ինտեգրատիվ ընթացք, որի հիման վրա ձևավորվում են սեփական արժեքային կողմնորոշումները, կուռքերը, իսկ սոցիալական դերերի յուրացման ընթացքում՝ նրա կյանքի ոճը:

Մանկավարժագիտական գրականությունը գերհագեցած է սոցիալականացումը դաստիարակությունից առանձնացնելու և այդ երկուսը միմյանցից տարբերող գործընթացներ դիտարկող դրույթներով ու պատկերացումներով:

Գրականության մեջ յուրահատուկ վերաբերմունք է դրսևորվում այս հարցի նկատմամբ, ըստ որի՝ «սոցիալականացում» հասկացությունը չի կարող փոխարինել «դաստիարակություն» հասկացությանը կամ օգտագործվել նրա փոխարեն: Կա կարծիք այն մասին, որ «սոցիալականացում» հասկացությունն իմաստ ունի, եթե սկզբնապես մարդը ասոցիալ էակ է, և նրա հակասոցիալականացումը պետք է հաղթահարվի: Այլ դեպքերում այդ տերմինը անձի սոցիալական զարգացման նկատմամբ կիրառել նավելորդ է:

Սոցիալական հոգեբանության մեջ սոցիալականացումը ներկայացվում է որպես մի կողմից սոցիալական փորձի յուրացում, մյուս կողմից էլ յուրացվածի հիման վրա անձի ակտիվ գործունեություն: Սոցիալական փորձի յուրացումը բնութագրում է, թե ինչպես է միջավայրն ազդում մարդու վրա, իսկ անձի ակտիվ գործունեությունը բնութագրում է նրա ներգործությունը միջավայրի վրա:

Ատենախոսության երրորդ՝ «Ժամանակակից մանկավարժության հասկացությունների համակարգի զարգացման առանձնահատկությունները» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Մանկավարժական հասկացությունների համակարգումը»** ենթագլխում ներկայացվում է, որ մանկավարժությունն անվանում են գիտություն մերթ դաստիարակության և ուսուցման, մերթ՝ դաստիարակության և կրթության, մերթ էլ՝ պարզապես դաստիարակության մասին: Մանկավարժության բնորոշումից կարելի է եզրակացնել, թե ըստ էության դաստիարակությունը, ուսուցումը և կրթությունը նույնական հասկացություններ են: Տարբեր բառերով նշանակվող հասկացությունների խառնումը և նույնացումը զրկում է մանկավարժությունն իրական գիտություն դառնալու հնարավորությունից՝ գիտություն, որ համարժեքորեն նկարագրեր մարդու՝ անձ դառնալու ընթացքը և դրանով մանկավարժական գործընթացի կազմակերպման տեսական և մեթոդաբանական հուսալի հիմք ծառայեր: Մանկավարժական հասկացությունների շփոթի փաստին առաջինն ուշադրություն է դարձրել Կ. Ուշինսկին, և մինչև հիմա էլ նրա վրա ուշադրության են հրավիրում շատ գիտնականներ: Ժամանակակից գիտական գրականության մեջ մանկավարժական հիմնակարգերի մեկնությունները առանձնանում են հակասություններով: Դա առաջնաբեմ է մղում հասկացատերմինաբանական զինանոցի ճշգրտման խնդիրը, քանի որ առանց դրա լուծման անհնար է հասնել հիմնական հասկացությունների միասնական ըմբռնման և մանկավարժական հարության ներսում դիրքորոշումների մերձեցման:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ անպտուղ բանավեճը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ լուծված չեն

լինի հասկացական զինանոցի մի քանի հիմնարար խնդիրներ: Դրանցից առաջինը մանկավարժության նպատակի որոշարկումն է, երկրորդը՝ մանկավարժական հասկացություններից յուրաքանչյուրի էության բացահայտումն ու բնորոշումը, երրորդը՝ սրա հիման վրա մանկավարժական հասկացությունների համակարգի կառուցումը, որի շնորհիվ է միայն հնարավոր ըմբռնել և լուծել մանկավարժական հասկացության տեղի, դերի և նշանակության խնդիրը:

Երկրորդ՝ **«Դաստիարակության տեսության տերմինաբանության զարգացումը այլ գիտությունների բառապաշարի փոխգործակցությամբ»** ենթագլխում շեշտվում է, որ մանկավարժական տերմինաբանության կատարելագործման համար կարևոր է նրա արդի վիճակի վերլուծությունը՝ զարգացման գործընթացի ինչպես մանկավարժական, այնպես էլ լեզվա-իմաստաբանական բնույթը հաշվի առնելով: Եթե տերմինաբանությունն իրենից ներկայացնում է լեզվական համակարգ, ապա նպատակահարմար է նրան վերաբերող հետազոտություններում նկատի ունենալ որոշակի լեզվաբանական չափանիշներ: Այս տեսանկյունից ենք մենք քննում դաստիարակության տեսության հասկացությունային-տերմինաբանական ապարատի և գիտական մի քանի բնագավառների (հոգեբանություն, սոցիոլոգիա, սոցիալական մանկավարժություն) տերմինաբանության փոխգործակցությունը և դրա որոշարդյունքները:

Մանկավարժության և հոգեբանության միջև օբյեկտիվորեն առկա փոխադարձ սերտ կապը տեսական մակարդակում արտահայտվում է նրանում, որ մանկավարժությունն ակտիվորեն օգտվում է հոգեբանության հասկացություններից, որոնք ոչ միայն թույլ են տալիս ձերբազատվել շատ դժվարություններից կրթության և դաստիարակության երևույթները իմաստավորելիս, այլև ծառայում են մանկավարժական հետազոտական խնդիրների հաջող լուծմանը, ընդլայնում են գիտության տերմինաբանական համակարգը:

Հումանիստական մանկավարժության՝ որպես դաստիարակության ժամանակակից տեսության և արակտիկայի գլխավոր ուղղության հիմունքները անկարելի է դիտարկել հումանիստական հոգեբանությունից խզված, որի գործնական կիրառման մի բնագավառ է հոգեթերապիան:

Դաստիարակության տեսության տերմինաբանության ընդլայնման այլ աղբյուր են հանդիսանում սոցիալական գիտությունները և մանկավարժական երևույթների հետազոտության նկատմամբ միջառարկայական կապերի վրա հիմնված նոր հայեցակարգային մոտեցումները:

Երրորդ՝ **«Ժամանակակից մանկավարժության հասկացությային-տերմինաբանական ապարատի նորացումը որպես օրինաչափ երևույթ»** ենթագլխում տրվում է, որ ժամանակակից մանկավարժության տեսության և կրթական արակտիկայի զարգացումը զուգակցվում է մանկավարժական

տերմինաբանության բնագավառում ծագած հիմնախնդիրների մի ողջ համալիրի հետ: Դրանց թվին են պատկանում, մասնավորապես, մանկավարժական տերմինների բազմանշանակությունը, այլ լեզուներից պատճենումը, գիտական շրջանառության մեջ նոր բառերի ներդրումը, որոնք հավակնում են տերմինների դեր կատարել:

Հայ մանկավարժության հետխորհրդային՝ անկախության շրջանում մանկավարժությունը հեղեղվեց այլ լեզուներից եկած տերմիններով ու հասկացություններով, որոնք պահանջում էին արդեն իսկ գոյություն ունեցող տերմինների և հասկացությունների հետ իրենց ճշգրտումն ու համաձայնեցումը: Այս գործընթացն առավել ուժեղացավ այն ժամանակ, երբ հայոց կրթական համակարգը սկսեց ինտեգրվել եվրոպական կրթատարածքին: Այլալեզու տերմինների փոխառումները հայ մանկավարժության տեսություն և պրակտիկա բերեցին նրա համար նոր հասկացություններ և երևույթներ, որոնք լրջորեն փոխել են հայ կրթական համակարգի պատկերը: Այդպիսի փոխառությունները թույլ են տալիս պնդելու, որ եթե նոր մանկավարժական երևույթները բերված են այլ երկրի կրթական ավանդույթներից, ապա այն կարող անցնել երեք ճանապարհ՝ ա) նրա հետ միասին կփոխառվեն նաև հասկացությունը և տերմինը, բ) մանկավարժական երևույթը «կհայացվի»՝ իր հայերեն հասկացության ու տերմինի վրա, գ) ժամանակի հետ այն դուրս կմղվի հայրենական կրթական պրակտիկայից:

Մանկավարժական տերմինաբանության բնագավառում արդի հիմնախնդիրների վերլուծությունը և նրանց ուսումնասիրության մի շարք ուղղությունների քննարկումը թույլ են տալիս մշակել տերմինաբանական նշված հիմնախնդիրների լուծման ընդհանուր մոտեցումներ: Առաջադրված մոտեցումները կարող են հանդիսանալ կողմնորոշիչներ ժամանակակից գիտա-մանկավարժական տեսության նոր մեթոդաբանական ուղղությունների որոնման ժամանակ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Տերմինաբանությունը, որ լեզվի բառապաշարի նշանակալի մասն է կազմում և դրսևորվում է որպես գիտության լեզվի իմաստաբանական միջուկ, այսօր հետազոտողների ավելի մեծ ուշադրությունն է գրավում, ըստ որում՝ տերմինագիտությանը՝ որպես տերմիններով զբաղվող գիտությանը, արդի գիտակարգերի համակարգում ամենից գերակատեղերից մեկն է հատկացվում:

2. Գիտության ամեն մի ճյուղի հասկացական-տերմինաբանական հիմքի զարգացումը, համակարգումը և կատարելագործումը գիտության, այդ թվում՝ մանկավար-

ժության հարատև և մշտապես արդիական խնդիրներից են: Գիտության այս կամ այն ոլորտի զարգացումն անխուսափելի որեն նոր հասկացությունների ու տերմինների, այլև դրանց ճշգրտման, վերիմաստավորման, սրբագրման և արդեն եղածների կարգավորման պահանջ է դնում:

3. Մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրման հարցում միջառարկայական մոտեցումը թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել նրա յուրահատկությունը, համակարգել կառուցվածքը, հետևաբար նպաստել մանկավարժական իմացության կանոնակարգմանը:

4. Արդի սոցիալ-քաղաքական պայմաններում մանկավարժության հասկացական-տերմինաբանական զինանոցով հաստատվում են մանկավարժական գործունեության բնույթի որոշակի փոփոխություններ: Այդ պատճառով ներկայումս նկատելիորեն բարձրացել է հետաքրքրությունը տերմինաբանության կարգաբերման և կատարելագործման խնդիրների նկատմամբ:

5. Յուրաքանչյուր գիտության, այդ թվում նաև մանկավարժական գիտության մեթոդաբանությունը պահանջում է ճշգրիտ և միանշանակ տերմինաբանության մշակում, որը կարևոր է թե՛ տեսաբանների, թե՛ գործնական մանկավարժությամբ զբաղվողների համար: Միակ, ճշգրիտ, միանշանակ մանկավարժական տերմինաբանությունը մանկավարժության հիմնախնդիրների քննարկման ժամանակ փոխըմբռնման և արդյունավետության կարևորագույն միջոց է:

6. Սոցիալական մանկավարժության հասկացությունների համակարգին բնորոշ են այնպիսի իմաստաբանական գործընթացներ, ինչպիսիք են բազմիմաստությունը, հոմանշությունը, հականշությունը, փոխաբերությունը: Առավել սուր է դրված սոցիալական մանկավարժության բազմաթիվ հասկացությունների ծավալային հոմանշության խնդիրը, մասնավորապես՝ սոցիալականացման, սոցիալական դաստիարակության, սոցիալական միջավայրի և այլն: Այդ առնչությամբ ակնհայտ է դառնում, որ անհրաժեշտ է սոցիալական մանկավարժության կատեգորիաների և հասկացությունների գիտական իմաստավորում:

7. Ժամանակակից մանկավարժության տեսության և կրթական պրակտիկայի զարգացումը զուգակցվում է մանկավարժական տերմինաբանության բնագավառում ծագած հիմնախնդիրների մի ողջ համալիրի հետ: Դրանց թվին են պատկանում, մասնավորապես, մանկավարժական տերմինների բազմանշանակությունը, այլ լեզուներից պատճենումը, գիտական շրջանառության մեջ նոր բառերի ներդրումը, որոնք հավակնում են տերմինների դեր կատարել:

8. Ներկայումս հասունացել է մանկավարժության մեջ կիրառվող բուն իսկ տերմինների, հասկացությունների էության համակողմանի վերլուծության անհրաժեշտու-

թյունը: Անհրաժեշտ է մշակել մանկավարժության գիտական տերմինաբանության համակարգման հիմունքներ, որոշել տերմինների համաստորադասության կարգը, գիտականորեն հիմնավորել դրանց կիրառության օրինաչափությունը տեսական վերլուծության ընթացքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում:

1. **Պետրոսյան Ա.**, Սոցիալական աշխատանքը մանկատանը: Միջազգային գիտաժողովի նյութեր (նվիրված Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին), Վանաձոր, 2009, էջ 235-240:

2. **Պետրոսյան Ա.,** «Սոցիալականացում» հասկացության կայացման փուլերի բնութագիրը գիտության մեջ: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Եր., «Իրավաբանական կենտրոն-Press» հրատ., 2009, N4, էջ 183-186:

3. **Պետրոսյան Ա., Մխիթարյան Վ.,** Մանկավարժագիտության պաշտոնականացված դասագիրքը՝ քննարկման առարկա: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Եր., «Իրավաբանական կենտրոն-Press» հրատ., 2010, N1, էջ 119-128:

4. **Պետրոսյան Ա.**, Սոցիալական աշխատանքը, սոցիալական մանկավարժությունը. «Մանկավարժություն», գիտամեթոդական վերլուծական ծրագիր, Եր., 2010, N4, էջ 39-46:

5. **Պետրոսյան Ա.**, «Սոցիալական մանկավարժություն» գիտությունը ընդհանուր մանկավարժագիտության ճյուղ չհամարելու հիմնավորումը: Գիտական հոդվածներ (Մանկավարժություն և մեթոդիկա), Վանաձոր, 2010, էջ 162-168:

6. **Պետրոսյան Ա.,** «Սոցիալական մանկավարժություն» հասկացությունը՝ քննարկման առարկա: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Եր., «Իրավաբանական կենտրոն-Press» հրատ., 2012, N1-3, էջ 67-69:

7. **Պետրոսյան Ա.**, «Մանկավարժություն» և «Դաստիարակություն» հասկացությունների բովանդակությունների հստակեցման մասին», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2013, N1-3, էջ 63-69:

8. **Պետրոսյան Ա.**, Մանկավարժական հասկացությունների նորացումը որպես անհրաժեշտություն, «Մխիթար Գոշ» // Գիտական հոդվածներ, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2015, N2, էջ 55-60:

9. **Պետրոսյան Ա.**, Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունների և կատեգորիաների մեկնաբանման հիմնախնդիրները, «Մխիթար Գոշ» // Գիտական հոդվածներ, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2016, N2, էջ 200-204:

10. **Պետրոսյան Ա.**, Ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաների առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ» // Ուսումնամեթոդական հոդվածներ, Վանաձոր, «ՍԻՄ

տպագրատուն», 2017, N1, էջ 102-107:

ПЕТРОСЯН АНАИТ РАФИКОВНА

ПРОБЛЕМА ИННОВАЦИОННОЙ МОДИФИКАЦИИ ПЕДАГОГИЧЕСКИХ ПОНЯТИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 01.11.2017 г. в 12^{00} на заседании специализированного совета по педагогике 020 “Педагогика” ВАК по присуждению ученых степей при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Статус и социальный рейтинг любой научной сферы обусловлены уровнем развития теории, что дает полное представление о законах и закономерностях, отражающих определенную сферу реальности, и становится предметом изучения данной науки.

Система знаний отражается в понятийной и категориальной системах данной науки. Закрепление понятий в науке является довольно сложным и длительным процессом. Сформировавшись стихийно в результате осмысления действительности и эмпирического опыта, они модифицируются и становятся составляющим компонентом той или иной науки.

Педагогика, как одна из древнейших наук, в настоящее время имеет в определенной степени сформированный категориальный аппарат, в котором с разным уровнем конкретизации аккумулируется педагогический опыт. Вместе с тем, в научно-понятийном аппарате постоянно происходят процессы, которые связаны с трансформацией содержания и объема категорий, с введением новыми понятиями категориального статуса или, наоборот, с утратой прежнего значения отдельными категориями.

Терминологические проблемы, связанные с педагогическими понятиями, особенно обостряются в период интенсивного развития педагогической науки и в условиях реформирования образовательной системы. В связи с этим, поступательное развитие педагогики, как науки и сферы практической деятельности, сопряжено с целым рядом специфических проблем, которые относятся к ее категориальному аппарату.

В современной армянской педагогической науке решение проблем понятийно-терминологического аппарата является приоритетным. Значимость исследований в этом направлении в большей степени зависит от глубокого анализа всего пути становления и развития педагогического понятийно-терминологического аппарата.

Такая ситуация порождает комплексные проблемы, которые требуют решения. В частности, надо отметить, что в теории и практике современной педагогики некоторые понятия зачастую обозначаются разными терминами или, наоборот, какой-либо термин может выражать принципиально различные понятия. Даже такие важнейшие категории как «образование», «воспитание», «обучение» получают разную, иногда противоположную, интерпретацию. Наблюдается также тенденция практически нерегулируемого роста количества таких новых слов

и словосочетаний, которые внедряются в терминологическую систему педагогики.

В современной педагогической науке модификация понятийно-терминологического аппарата считается одним из приоритетных направлений. Исследования в этой области способствуют более глубокому и фиксированному развитию педагогического знания, его теоретической стабильности.

Цель исследования. На основе теоретических исследований выявить сущность развития системы современных педагогических понятий и обосновать необходимость модификации системы понятий педагогики.

В соответствии с целью, объектом, предметом и гипотезой исследования были сформулированы следующие задачи:

1. Выявить роль терминологии в процессе изучения языка педагогической науки.
2. Определить проблемы изучения, классификации и формирования понятийной системы современной педагогики.
3. Выявить основные факторы развития и процесс модернизации современных педагогических понятий.
4. Выявить противоречия и проблемы формирования понятийной системы педагогики.
5. Определить условия дальнейшего развития и модернизации педагогических понятий и технологий.

Научная новизна исследования:

1. Выявлены характеристики педагогических понятий с позиций философии, языкознания и педагогики.
2. Выявлены противоречия развития системы педагогических понятий и выделены основные проблемы.
3. Выявлены тенденции модификации педагогических понятий, отражающие проблемные поля педагогической науки, обозначена взаимосвязь с педагогической теорией и практикой, социально-политическими, культурными, научными и экономическими изменениями общественной жизни.
4. Представлены проблемы интерпретации основных понятий педагогики.

Теоретическое значение результатов исследования. Выявлены сущность и тенденции модификации педагогических понятий, связанные с динамикой педагогической теории и практики, а также с изменением социально-политических, экономических и культурных условий жизни, что расширяет научные представления о развитии педагогической науки. С выявлением противоречий и проблем модификации педагогического категориального аппарата, развивается общая теория педагогической терминологии.

Практическое значение результатов исследования. Результаты исследования могут использоваться во время преподавания дисциплин «Педагогика» и «Социальная педагогика». Одновременно они могут стать основой для внесения соответствующих корректировок в педагогические словари.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы. Текст диссертации, включая список литературы, составляет 143 компъютерных страниц.

ANAHIT PETROSYAN RAFIK

THE ISSUE OF MODERNIZING THE FUNDAMENTAL CONCEPTS OF PEDAGOGY

Thesis for the degree of Candidate of Pedogogical Sciences specialty 13.00.01. “Theory of Pedagogy and History”.

The defence of the thesis will be held at 12^{00} on 01.11.2017 at the session of the Special Board 020 “Pedagogy” HAC (Higher Attestacion Commmission) to award scientific degrees at the State Pedogogical University after Kh. Abovyan. Address: 0010, Yerevan, Tigran Mets ave., 17.

SUMMARY

The Relevance of the research: The state social status of any scientific field depends on the level of its theoretical development, which is responsible for providing full understanding of the objective rules and regulations that reflect the perceived reality and become the primary subject the research field.

The body of knowledge reflects the concepts and categories of the given research field. The solidification of the scientific concepts in any field is a long and complex process that involves systematic empirical studies and reflections on reality, which subsequently become the necessary components of a scientific system.

Pedagogy, as one of the oldest sciences, currently contains a set of specifically formed system of concepts, where pedagogical practice is established with varied levels of clarity. Along with that, in the system of scientific concepts there are always a set of processes taking place, which are related to the changes of the meaning of existing terms, establishment of categorically new concepts, or the opposite, re-inventing new semantic meanings for the existing concepts in line with the categories they belong to.

The terminological problems related to the semantic meaning of concepts become more acute especially during rapid development and under conditions of educational reforms. As a result the development of pedagogy as a science and a field of practice is associated with a set of specific problems which are related to its categorical apparatus.

It is considered to be a priority to resolve the key issues of the modern system of the Armenian pedagogical terminology. The importance of research in this direction largely depends on the deep analysis of the entire path of the establishment and development of pedagogical conceptual and terminological apparatus.

This situation leads to a set of complex problems which require solutions. In particular, it is necessary to highlight, that in the theory and practice of modern pedagogy some of the concepts are often referred to different terms or, vice versa, some terms may be associated to radically different concepts. Even such important categories as “pedagogy”, “education”, “learning” may get different, and at times opposite meanings. Additionally, one can observe a practically unregulated growth of new words and their combinations, which are entering the pedagogical terminology system.

In modern pedagogical science, the modernisation of conceptual and terminological apparatus is considered one of the priorities of the developmental path. Research

in this field encourages and leads to deeper development of pedagogical knowledge and its theoretical stability.

The aim of the research: Based on theoretical research, identify the core of the development of the modern system of pedagogical concepts and establish foundations for the required change of the conceptual system of pedagogy.

In line with the aim, subject and the conjectured hypotheses of the research, the following objectives have been formulated:

1. Identify the role of terminology in the process of studying the language of pedagogical science.
2. Identify the problems of research, classification and formation of conceptual system of modern pedagogy.
3. Identify the main factors of development and the process of modernization of new pedagogical concepts.
4. Identify the contradictions and problems of formation of pedagogical conceptual system.
5. Define the conditions of future development and modernization of pedagogical concepts and technology.

Scientific novelty of the research:

1. Identified characteristics of pedagogical concepts from philosophical, linguistic and pedagogical viewpoints.
2. Identified contradictions of the development of the pedagogical conceptual system and highlighted key problems.
3. Identified the tendencies of modernization of pedagogical concepts that reflect the problematic fields of pedagogical science. Defined an inter-relation between the pedagogical theory and practice, socio-political, cultural, scientific and economical changes of life.
4. Presented the problems of interpretations of the main concepts of pedagogy.

Theoretical importance of research results: Identified the essence and the trends in modifying the pedagogical concepts in line with the dynamics of pedagogical theory and practice, as well as the changes of socio-political, economic and cultural conditions of life. This extends the scientific views of the development of pedagogical science. By identifying the contradictions in the pedagogical conceptual system and the need for modernizing pedagogical categorical apparatus the general theory of pedagogical terminology is being developed.

Practical importance of research results: The results of the research can be used for teaching the subject of “Pedagogy” and “Social Pedagogy”. At the same time, these may become a foundation for introducing relevant corrections in pedagogical dictionaries.

The structure and volume of the thesis: The thesis contains of an introduction, three chapters, conclusions and references. The thesis consists of 143 computer pages.